սեպտ. 1788 Արքեպիսկոպոս Մարտինոյ. ձեռնադրութիւնն ըրաւ Գրիգոր Պետրոս Ե. պատրիարք Տանն Կիլիկիոյ 16 օգոստ. 1789 կամ ըստ Մանուէլ վարդապետի ի տոնի վերացման խաչին 14 սեպտ։ Սա խրոխտ ընթացք մը բռնեց և սկսաւ ինքնագլուխ վարուիլ. ասոր համար անշուշտ կ'ըսէ Կայսեանոս Մորոնի, թէ «Մարտինոյ եպիսկոպոսն անկախ պատրիարքէն՝ կը նստի Մարտին, թէեւ Կիլիկիոյ պատրիարքութեան ներքեւ է իր աթոռն. և Ս. Ժողովն Տարածման հաւատոյ պարտք դրած է պատրիարքին, որ հսկէ անոր վրայ»։ Սա վարեց իր աթոռը քառասուն և ութ տարի. վախճանեցաւ 27 Նոյեմբ. 1830 ին ի Մարտին. և թաղեցաւ նախորդ արքեպիսկոպոսաց շիրմին մէջ։

Ը. — Բարդամ կամ Աբրահամ Գանտիլեան Աշակերտցի։

Ասոր ծնունդն եղած է յամին 1767 յԱշակերտ. աշակերտեցաւ սա Ուրբանեան դպրոցն ի Հռովմ։ Ձեռնադրեցաւ Ցովակիմ Թասպասեան արքեպիսկոպոսէ՝ իրեն օգնական եպիսկոպոս Տոյիգայի տիտղոսով, զոր թէ և ոմանք Տիվրիկը կարծեցին, բայց աւելի յարմար է ըսել թէ այն՝ Տէրին էր։ Մարտինոյ Արքեպիսկոպոսին այս ձեռներեցութեան չի հաւանեցաւ Գրիգոր Պետրոս Զ. պատրիարք Տանն Կիլիկիոյ. և շատ մը բանակցութիւններէ վերջ՝ Պիոս Է. իր քահանայապետութեան ԺԸ. տարին 5 դեկտ. 1817 ին կարգեց զԲարդամ արքեպիսկոպոս Եղեսիոյ. և Ցնաց օգնական Ցովակիմայ մինչեւ անոր մահը. ապա վախճուն և ինն տարուան անուանեցաւ արքեպիսկոպոս Մարտինոյ, զոր կառավարեց իբր երկու տարի. 28 1838ին թաղեցին Մարտին իր նախորդաց գերեզմանը։

Թ. — Ցովսէփ Ֆարրայեան Հալէպցի։

Ծնաւ Հալէպ յամին 1786. էր աշակերտ և միաբան վանաց Զմմառի. նախորդին մահուանէն առաջ, Ս. ժողովը որոշեց տալ անոր օգնական ի 23 յունիս 1838 Ֆարրայեան Ցովսէփ վարդապետը բարեհաճութեամբ քահանայապետին, որ յանձնեց անոր ընտրութիւնը Գրիգոր Պետրոս Զ. պատրիարքին Կիլիկիոյ. և սա ընտրելէն ետեւ հաստատեց յամին 1838 նոյն տարին ձեռնադրեց յուլիս 15 ին։ Ցովսէփ արքեպիսկոպոս քանի մի տարի իր վիճակը յանձնանձելէ վերջ հրաժարեցաւ և առանձնացաւ ի Հալէպ, ուր կնքեց իր կեանքը 7 սեպտ. 1854 և թաղեցաւ նոյն քաղաքին մէջ։

Այս պատճառաւ ժամանակ մը պատրիարքական Աթոռը խնամ կը տանէր Մարտինոյ հոգեւոր վարչութեան իր փոխանորդներովը, այս ինքն Ֆարրահեան արքեպիսկոպոսին հրաժարելէն՝ մինչև տրուեցաւ նոյն վիճակին նոր հովիւ։

Տ. Վ. Աղեքսանդրեան

ԱՌ ՊԱՏՈՒԱՐԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

«Բազմավէպ» հանդիսարանի

Բազմավէպիդ վերջին պրակին մէջ[1] Գանիրէի Նորաշէն Ազգ. Վարժարանի բացման հանդիսին ծանուցման մէջ մի քանի սխալներ սպրդած են, զորս արժան է նշդել։

Այդ Վարժարանը Վսեմ. Գ. Գոլոս փաշա Նուպար շինել տուաւ, սակայն փոխուած չէ անունն, և կ'անուանի միշտ ըստ առաջնոյն «Գալուստեան Վարժարան» զայն հիմնողին անուամբ. և այդ բարեբարի Վարժարանի համար կտակած հողերու արդիւնքով կը հոգացուի ցարդ այդ հաստատութեան ծախսն։

Այդ Վարժարանի շինութեան համար մէկ միլիոն ծախսուած չէ, ինչպէս գրուած է, այլ Վսեմ. Գ. Գոլոս փաշային ազգին նուիրած մէկ միլիոն ֆրանքի մէկ երրորդով միայն. իսկ մնացեալ $^2/_3$ ի տոկոսն յատկացուած է ուսանողաց ուսումնառոնիկներու (bourse), կէսն Նգիպտոսի մասնագիտական վարժարանաց հետեւողաց և կէսն Նէրոպիոյ մէջ բարձր ուսում ընդունողներու։

1. Բզմ. ի մէջ 1907 (սեպտ. հոկտ.) հայ լրագիրներէն անճիշտ տեղեկութիւն մը մտած է Ազգային կեանքը լուրերու հաւաքածոյին մէջ, զոր բարեկամ մը կ'ուղղէ։

digitised by A.R.A.R.@